Ավետիք Իսահակյան

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չըտեսանք.
Վա՛խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն – խմեն
Աշխարհի ճոխ սեղանից.
Մենք աշխարհի խորթ տըղերքն ենք,
Մեզ փայ չըկա աշխարհից;

Խեղճ աղքատի հոգին դուրս գա,
Քարից – հողից հաց քամե.
Բեռով հացը հարըստին տա, -
Հարուստն իշխե, վայելե:

Խեղճ աղքատը դառը դատի, -
Դատարկ նըստի … Է՜յ աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վըրա, քար - աշխա՛րհ:

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չըտեսանք.
Վա՛խ մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք:

1898

Օդեսա